

5.7. Բնակարան և բնակելի տուն ստացած և հերթագրված ընտանիքները 2004 թվականին

Ըստ բնակարանային պայմանների բարելավման նպատակով հաշվառում իրականացնող և բնակարաններ ու բնակելի տներ հատկացնող կազմակերպություններից (մարզպետարաններ, քաղաքապետարաններ) ստացված վիճակագրական ամփոփ տվյալների, 2004թ. հանրապետությունում բնակեցվել է 66702 քառ. մ ընդհանուր մակերես (38113 քառ. մ-ն՝ բնակելի), որից 32005 քառ. մ-ը կամ 48.0%-ը (18401 քառ. մ կամ 48.3%՝ բնակելի)՝ նորակառույց շենքերում:

Բնակեցված ընդհանուր և բնակելի մակերեսներն ըստ մարզերի, 2004թ.

(քառ. մ)

	Ընդամենը		որից՝ նորակառույց շենքերում	
	ընդհանուր	բնակելի	ընդհանուր	բնակելի
ք.Երևան	9574	5463	40	21
Արագածոտն	-	-	-	-
Արարատ	159	115	-	-
Արմավիր	-	-	-	-
Գեղարքունիք	-	-	-	-
Լոռի	5544	3866	4359	3058
Կոտայք	-	-	-	-
Շիրակ	49843	27660	26834	14877
Սյունիք	654	470	-	-
Վայոց ձոր	-	-	-	-
Տավուշ	928	539	772	445
Ընդամենը ԳՂ	66702	38113	32005	18401

2004թ. բնակեցված ընդհանուր մակերեսի առավելագույն մասը բաժին է ընկել Շիրակի մարզին՝ 74.7%, ք.Երևանին՝ 14.4%, Լոռու մարզին՝ 8.3%: Նորակառույց շենքերում բնակեցման մակերեսների բաշխվածությունը հետևյալն է. Շիրակի մարզում՝ 83.9%, Լոռու մարզում՝ 13.6%, Տավուշի մարզում՝ 2.4%, ք.Երևանում՝ 0.1%:


2004թ. բնակարան և բնակելի տուն են ստացել ու հերթագրված բնակարանային պայմանները բարելավել 1114 ընտանիք՝ 3928 անդամներով:

Բնակարան և բնակելի տուն ստացած ու բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների քանակն ու ընտանիքների անդամների թվաքանակն ըստ մարզերի

	Ընդամենը, առ 01.01.2005թ., միավոր	01.01.2004թ. հերթագրված ընտանիքների քանակից, %	Բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների անդամների թվաքանակը, մարդ
ք.Երևան	152	2.3	334
Արագածոտն	-	01.01.2004թ. հերթագրված է եղել 167 ընտանիք	-
Արարատ	4	0.1	11
Արմավիր	-	01.01.2004թ. հերթագրված է եղել 362 ընտանիք	-
Գեղարքունիք	-	01.01.2004թ. հերթագրված է եղել 778 ընտանիք	-
Լոռի	98	2.0	364
Կոտայք	-	01.01.2004թ. հերթագրված է եղել 627 ընտանիք	-
Շիրակ	829	10.3	3098
Սյունիք	16	0.3	56
Վայոց ձոր	-	01.01.2004թ. հերթագրված է եղել 43 ընտանիք	-
Տավուշ	15	1.3	65
Ընդամենը ԳՂ	1114	3.6	3928

Աղետի գոտու քաղաքային համայնքներում 2004թ. բնակարան և բնակելի տուն են ստացել 865 ընտանիք՝ 3269 անդամներով:

Բնակարան և բնակելի տուն ստացած ընտանիքների տոկոսային բաշխվածությունն ըստ աղետի գոտու քաղաքային համայնքների, 2004թ.



2004թ. ընթացքում բնակարանային պայմանների բարելավման նպատակով հաշվառման է վերցվել 1500 ընտանիք (2005թ. հունվարի 1-ի դրությամբ այդ նպատակով հաշվառված ընտանիքների ընդհանուր քանակի 5.1%-ը):

2004թ. ընթացքում տարբեր պատճառներով բնակարանային պայմանների բարելավման համար դիմած ընտանիքներից հաշվառումից դուրս է եկել 3420 ընտանիք: 2005թ. հունվարի 1-ի դրությամբ բնակարան և բնակելի տուն ստանալու և բնակարանային պայմանները բարելավելու համար հանրապետությունում հաշվառման է վերցվել 29350 ընտանիք:

Հերթագրված ընտանիքների բաշխվածությունն ըստ փաստացի զբաղեցրած կացարանի տեսակի, 2004թ.

	Ընդամենը, միավոր	այդ թվում՝ բնակվում են (%-ով ընդհանուրից)			
		հանրակացարաններում	վթարային բնակելի ֆոնդում	տնակներում	այլ ժամանակավոր կամ բնակարանային չափանիշներին չհամապատասխանող կացարաններում
ք. Երևան	5920	0.5	2.0	0.0	97.5
Արագածոտն	324	35.5	21.6	3.4	39.5
Արարատ	3052	4.8	2.3	0.1	92.8
Արմավիր	362	4.1	1.9	0.6	93.4
Գեղարքունիք	887	13.3	24.8	-	61.9
Լոռի	4645	3.1	3.3	55.3	38.3
Կոտայք	619	94.3	-	4.7	1.0
Շիրակ	6936	6.2	12.5	54.8	26.5
Սյունիք	5733	1.2	5.8	0.1	92.9
Վայոց ձոր	44	-	-	-	100.0
Տավուշ	828	8.3	9.1	5.0	77.6
Ընդամենը ՀՀ	29350	5.9	6.5	22.0	65.6

Հերթագրված ընտանիքների քանակից 18947-ը (ընդհանուր հերթագրվածների 64.6%-ը) հերթի են կանգնած 10 և ավելի տարի:

Բնակարան և բնակելի տուն ստացած և բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների և բնակեցված բնակելի մակերեսների բաշխվածությունն ըստ աղետի գոտու քաղաքների և գյուղական համայնքների

	2004թ. բնակեցված բնակելի մակերեսը, քառ. մ		Բնակարան և բնակելի տուն ստացած և բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների քանակը, միավոր	Հերթագրված ընտանիքների քանակը, առ 01.01.2005թ., միավոր
	ընդամենը	որից՝ նորակառույց շենքերում		
Արագածոտն	-	-	-	309
ք. Ապարան	-	-	-	-
ք. Թալին	-	-	-	159
գյուղական համայնքներ	-	-	-	150
Լոռի	3866	3058	98	4645
ք. Վանաձոր	467	51	14	223
ք. Ալավերդի	59	-	2	881
ք. Ախթալա	-	-	-	44
ք. Շամլուղ	-	-	-	-
ք. Թումանյան	-	-	-	32
ք. Սպիտակ	1549	1549	30	456
ք. Ստեփանավան	-	-	-	834
ք. Տաշիր	85	-	2	90
գյուղական համայնքներ	1706	1458	50	2085
Շիրակ	27660	14877	829	6936
ք. Գյումրի	26476	13693	802	5632
ք. Մարալիկ	-	-	-	76
ք. Արթիկ	-	-	-	948
գյուղական համայնքներ	1184	1184	27	280
Տավուշ	539	445	15	828
ք. Իջևան	-	-	-	370
ք. Նոյեմբերյան	-	-	-	25
ք. Բերդ	-	-	-	7
ք. Դիլիջան	539	445	15	193
գյուղական համայնքներ	-	-	-	233
Ընդամենը	32065	18380	942	12718
քաղաքային համայնքներ	29175	15738	865	9970
գյուղական համայնքներ	2890	2642	77	2748